Հաստատված է

«Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական
համալսարան» ՊՈԱԿ ռեկտորի
8.02.2012 թվականի
թիվ 2-96 հրամանով

Ընդունվել է գիտական խորհրդի
3. փետրվարի 2012 թվականի
թիվ N6 նիստում

Գիտական խորհրդի նախագահ,
Ռեկտոր Ռ.Կ. Միրզայանյան

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Երևան 2012

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուների առաջադրման, ընտրությունների անցկացման և դեկանի պաշտոնում հրամանագրման կարգը:
2. Դեկանը Համալսարանի ռեկտորի որոշմամբ ընտրվում է ֆակուլտետի խորհրդի կամ Համալսարանի գիտական խորհրդի՝ կողմից փակ (գաղտնի) քվեարկությամբ՝ հինգ տարի ժամկետով: Դեկանի աշխատանքը վարչական և գիտամանկավարժական է: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ զբաղեցնել դեկանի պաշտոնը:
3. Ֆակուլտետի դեկանը Համալսարանում միաժամանակ այլ վարչական պաշտոն չի կարող զբաղեցնել:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

4. Դեկանի թափուր պաշտոնի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է ընտրությունից առնվազն 30 օր առաջ: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման վերջնաժամկետը:[1]
5. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածություններն առաջադրվում են՝
   ա) տվյալ ֆակուլտետի պրոֆեսորներից (դոկտորներից), ինչպես նաև տվյալ ֆակուլտետի հինգ ու ավելի տարիների գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող դոցենտներից.
   բ) Համալսարանի այլ ֆակուլտետներում լրիվ դրույքով աշխատող պրոֆեսորներ (դոկտորները), ինչպես նաև Համալսարանի այլ ֆակուլտետներում լրիվ դրույքով աշխատող հինգ ու ավելի տարիների գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող դոցենտները.
   գ) Համալսարանի տվյալ ֆակուլտետում համատեղությամբ աշխատող այլ բուհերի կամ այլ գիտահետազոտական կազմակերպությունների պրոֆեսորները կամ դոցենտները:
6. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուներ կարող են առաջադրել ֆակուլտետի ուսումնագիտական ստորաբաժանումները, ինչպես նաև ինքնառաջադրմամբ:
7. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի հավակնորդները հայտարարության հրապարակումից հետո 15 օրվա ընթացքում **Համալսարանի** գիտական քարտուղարին են ներկայացնում՝
   ա) ֆակուլտետի ուսումնագիտական ստորաբաժանումների կողմից առաջադրման դեպքում՝ համապատասխան նիստի արձանագրությունից քաղվածք և թեկնածուի համաձայնություն, կամ ինքնառաջադրման դեպքում՝ դիմում՝ հասցեագրված ռեկտորին.
   բ) կադրերի հաշվառման անհատական թերթիկ.
   գ) քաղվածք աշխատանքային գրքույկից.
   դ) համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով.
   ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը.
   զ) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները.
   է) տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը.
   ը) տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:
8. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուների ցուցակը Համալսարանի գիտական քարտուղարը **խորհրդի** նիստից 10 օր առաջ հրապարակում է և այդ մասին ծանուցում թեկնածուներին:

III. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

---

[1] Այսուհետ խորհուրդ նշելով պետք է նկատի ունենալ Համալսարանի ֆակուլտետի խորհուրդը կամ Համալսարանի գիտական խորհուրդը:

Դեկանի ընտրության **Խորհրդի** նիստը նախագահում է Համալսարանի ռեկտորը կամ ռեկտորի կողմից լիազորված պրոռեկտորը:

10. Նախագահողը ըստ ազգանունների այբբենական կարգի ներկայացնում է թեկնածուների ցուցակը և նշում առաջադրող ստորաբաժանումներին: Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, Համալսարանի գիտական խորհրդում՝ խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
11. Թեկնածուները կարող են մասնակցել նիստին և ներկայացնել իրենց նախընտրական ելույթները:
12. Նախընտրական ելույթները կայանում են ըստ թեկնածուների ազգանունների այբբենական կարգի: Թեկնածուների ելույթի համար տրվող ժամանակի վերաբերյալ **Խորհուրդը** ընդունում է որոշում:
13. **Խորհուրդը** ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուին փակ (գաղտնի) քվեարկության թողնելու վերաբերյալ ընդունում է որոշում:
Թեկնածուն կարող է հայտնել ինքնաբացարկ մինչև սույն կետի 1-ին պարբերությամբ նշված որոշման ընդունումը:
14. Նախագահողը **Խորհրդի** անդամներին ներկայացնում է փակ (գաղտնի) քվեարկության կարգը:
15. Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացման և արդյունքներն ամփոփման համար **Խորհուրդը** բաց քվեարկությամբ իր կազմից ընտրում է թվով երեք անդամից ոչ պակաս հաշվիչ հանձնաժողով:
Դեկանի թեկնածուները չեն կարող առաջադրել և առաջադրվել հաշվիչ հանձնաժողովի կազմում:
Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
16. Դեկանի ընտրության քվեաթերթերում
   1) Մեկ թեկնածության քվեարկության դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է լինեն «կողմ» և «դեմ» բառերը (հավելված 1):
   2) Մեկից ավելի թեկնածությունների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը և վերջին տողում <<բոլորին դեմ եմ>> բառերը (հավելված 2):
17. **Խորհրդի** յուրաքանչյուր անդամ հաշվիչ հանձնաժողովից ստանում է մեկ քվեաթերթիկ և ստորագրում **Խորհրդի** անդամացուցակում:
18. Մեկ թեկնածուի քվեարկության դեպքում քվեաթերթիկում նշվում է «կողմ» կամ «դեմ» բառը:
Մեկից ավելի թեկնածուների դեպքում քվեարկվում է միայն մեկ թեկնածուի օգտին կամ նշվում է <<բոլորին դեմ եմ>>:
19. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (հավելված 3): Մեկից ավելի թեկնածությունների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:
Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝
ա) թողնված կամ նշված են թե՛ «կողմ» և թե՛ «դեմ» բառերը (մեկ թեկնածուի քվեարկության դեպքում),
բ) նշված են երկու և ավելի թեկնածություններ (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում),
գ) կատարված են սույն կարգով չնախատեսված նշումներ, ընդգծումներ և այլ նշաններ:
Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:
20. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է արձանագրությունը, որից հետո հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է **Խորհրդի** կողմից, բաց քվեարկությամբ:
21. Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել է Համալսարանի գիտական խորհրդի անդամների (Ֆակուլտետի խորհրդում ընտրության անցկացման դեպքում՝ ֆակուլտետի խորհրդի նիստին ներկա անդամների) ձայների պարզ մեծամասնությունը:

Երկուսից ավելի թեկնածուների դեպքում, եթե որևէ թեկնածու չի ստացել սույն կարգի 21-րդ կետով սահմանված ձայներ, Խորհրդի նույն նիստում կազմակերպվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուները:

23. Սույն կարգի 21-րդ և 22-րդ կետերով սահմանված կարգով որևէ թեկնածուի կողմից համապատասխան քանակի ձայներ չստանալու դեպքում նշանակվում է դեկանի նոր ընտրություն:
24. Ֆակուլտետի դեկանի ընտրության արդյունքները հաստատվում են **Խորհրդի** նիստում՝ բաց քվեարկությամբ, իսկ որոշումը ներկայացվում է Համալսարանի ռեկտորին՝ հրամանագրման:
25. Ֆակուլտետի դեկանի ընտրության վերաբերյալ ընդունված որոշման հետ Համալսարանի ռեկտորի հիմնավորված անհամաձայնության դեպքում (գրավոր ներկայացվում է Խորհրդին), կազմակերպվում է դեկանի նոր ընտրություն:
26. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ֆակուլտետ, ֆակուլտետում դեկանի պաշտոնի թեկնածության բացակայություն և այլն) Համալսարանի ռեկտորն իրավասու է մինչև մեկ տարի ժամկետով ֆակուլտետի դեկանի պաշտոնում հրամանագրել սույն Կարգի որակական պահանջները բավարարող մասնագետի և հրամանագրման ժամկետի ավարտին նախաձեռնել ֆակուլտետի դեկանի ընտրության նոր գործընթաց:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

26. Համալսարանի ռեկտորը ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրված անձի հետ մինչև հինգ տարի ժամկետով կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում է դեկանի պաշտոնում:
27. Պայմանագրով նախատեսված աշխատանքները պատշաճ կատարելու դեպքում Համալսարանի ռեկտորին իրավունք ունի օրենքով սահմանված կարգով և հիմք ընդունելով ֆակուլտետի խորհրդի (Համալսարանի գիտական խորհրդի) դրական կարծիքը՝ դեկանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո նույն անձի հետ կնքել նոր աշխատանքային պայամագիր՝ մինչև հինգ տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության:
28. Պայմանագիրը կարող է լուծվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Համալսարանի գիտական (_____) խորհրդի
ֆակուլտետի անվանումը

_____ նիստում (արձանագրություն թիվ _____)
տարեթիվ, ամսաթիվ

Դեկանի փակ (գաղտնի) քվեարկության

_____ ☐ Կողմ* ☐ Դեմ
(Թեկնածուի ազգանունը, անունը)

* Թեկնածությանը կողմ լինելու դեպքում նշվում է «Կողմ» բառը, իսկ դեմ լինելու դեպքում՝ «Դեմ» բառը՝ համապատասխան տողի վանդակում կատարելով «√» նշումը:

Հավելված 2

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Համալսարանի գիտական (_____) խորհրդի
Ցանկալի տեղի անվանումը

_____ նիստում (արձանագրություն թիվ _____)
տարեթիվ, ամսաթիվ

Դեկանի փակ (գաղտնի) քվեարկության

1. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
2. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
3. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
4. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
5. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
6. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
7. ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ	

* Որևէ Թեկնածուին կողմ լինելու կամ բոլորին դեմ լինելու դեպքում քվեաթերթիկում համապատասխան տողի վանդակում կատարվում է «√» նշումը:

Հավելված 3

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Համալսարանի գիտական (_____)
ֆակուլտետի անվանումը

խորհրդի _____ նիստում (արձանագրություն թիվ _____)
տարեթիվ, ամսաթիվ

հետևյալ կազմով՝

1. _____
2. _____
3. _____

Համալսարանի գիտական (_____) խորհրդի
ֆակուլտետի անվանումը

_____ անդամներից ներկա էին _____-ը:

Քվեարկվել է (են) _____ ֆակուլտետի դեկանի
ֆակուլտետի անվանումը

պաշտոնի թեկնածությունը (ները):
Քվեարկությանը մասնակցել է Համալսարանի գիտական (_____)
ֆակուլտետի անվանումը

խորհրդի _____ անդամ:
Բաժանվել է _____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:
Քվեարկության արդյունքներն են՝

Միակ թեկնածուի դեպքում

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Մեկից ավելի թեկնածությունների դեպքում

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով _____
ազգանուն, անուն

ընտրված է (չի ընտրված) _____ ֆակուլտետի դեկանի
ֆակուլտետի անվանումը

պաշտոնում:

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով _____
ֆակուլտետի անվանումը

ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում դեկանի պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

1. _____
ազգանուն, անուն

2. _____
ազգանուն, անուն

մասնակցում են ընտրության երկրորդ փուլին:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

2. _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

3. _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն